

- Պարոն Հարությունյան, հուլիսի յոթից բարձրացավ գազի գինը, սակայն թանկացումը տարբեր ոլորտներում տարբեր է, մասնավորապես բնակչի կամ տնային տնտեսության համար այն 18% է, խոշոր սպառողների համար՝ 13%, կասե՞ք նաև գազալցակայանների համար ինչքա՞ն է նախատեսված ու ինչո՞վ է պայմանավորված ոչ համարժեք թանկացումը:

- Գազալցակայանները համարվում են 10.000 խորանարդ մետրից ավելի սպառողներ և նույն դաշտում են գործում, ինչ-որ մնացած սպառողները, որոնք ունեն 10.000 խորանարդ մետրից ավելի գազի սպառում, ասինքն՝ արդյունաբերություն, էներգետիկա՝ նույն ոլորտներն են, ինչ-որ գազալցակայանները ու հետևաբար նույն գինն են վճարում:

Ինչ վերաբերում է ոչ համարժեք թանկացմանը, ապա երբ հանձնաժողով ենք ներկայացնում գազի թանկացման հետ կապված մեր հայտը, այնտեղ ոչ թե տարբերակում ենք արդյունաբերություն-բնակչություն, այլ ներկայացնում ենք ընդհանուր մեր շահագործման համար նախատեսված ծախսը:

Ներկայիս սակագնի մեջ այդ ծախսերը, այսպես ասած՝ մարժան, կազմում է 70\$, այսինքն՝ 189\$ սահմանի վրա ֆիքսված գինը, գումարած 70\$=259\$ առանց ավելացված արժեքի հարկի, ԱԱՀ-ի հետ միասին կազմում է 311,58\$. դա միջին սակագինն է: Ինչքան է արդյունաբերողների, այսինքն՝ 10.000 խորանարդ մետր և ավելի սպառում ունեցող մեր բաժանորդների սակագինը և ինչքան է բնակչությանը, որը մտնում է մինչև 10.000 խորանարդ մետր սպառում ունեցողների դաշտը, դա արդեն որոշում է հանձնաժողովը: Ինչի՞ համար է տարբերակված, որովհետև բնակչության վրա մեր ունեցած շահագործման ծախսերն ավելի մեծ են. գործում են միջին ճնշման գազատարներ, բարձր ճնշումը մենք վերածում ենք միջին ճնշման, դա արտադրական պրոցես է, որից հետո բնակչին մատակարարելու համար՝ նաև ցածր ճնշման, իսկ արդյունաբերական ձեռնարկությունները և ձեռնարկությունները, որոնք ունեն 10.000 խորանարդ մետրից ավելի սպառում, դրանք օգտվում են հենց միջին ճնշման գազատարներից ու շահագործման ծախսերի հաշվին բնական է, որ այն բաժանորդները, որոնք սնվում են ցածր ճնշման գազատարներից, իրենց սակագինը պիտի որոշակիորեն տարբերվի այն բաժանորդներից, որոնց վրա ծախսը ավելի քիչ է: Հիմա արդարացի չէր լինի չէ՞, երբ բնակչության վրա արված ծախսերը ներառեինք այն խմբի սպառողների վրա, որոնք ավելի քիչ ծախս են մեզանից պահանջում: Դա է տարբերակումը: Իսկ թե ինչո՞ւ մեկը 13% է թանկացել, մյուսը՝ 18%, ասեմ, որ ընդհանուր թանկացումը 13% է եղել, եթե նայենք դոլար-դրամ փոխարժեքը 2010 թվականին և վերցնենք հիմա, կտեսնենք, որ այդ 4-5%-ը զուտ դոլար-դրամ փոխարժեքի տատանումից է, իսկ մենք մեր 10.000 խորանարդ մետր և ավելի սպառում ունեցող մեր բաժանորդներին միշտ վաճառել ենք դոլարով, այսինքն՝ տվյալ ամսվա դոլարային փոխարժեքով վաճառվել է, դրա համար այնտեղ փոփոխությունը ֆիքսված է 13%, իսկ այստեղ միջդրամային է եղել, գումարվել է նաև դոլարի փոխարժեքի տարբերությունը ու ստացվել է 18%:

Եթե ուզում եք նայել, թե որքանով է թանկացել միջին գինը, ապա 311,58 համեմատեք 286-ի հետ, որը եղել է նախկինում: Կտեսնեք, որ մեծ տարբերություն չի լինի:

- Հասկանալի է, որ խոշոր սպառողին ավելի հեշտ է գազ մատակարարել, քան բնակչին, դրանով էլ տոկոսային հարաբերությունը պարզ է, սակայն աշխարհի շատ երկրներում կա նման փորձ, որ բնակչին կամ տնային տնտեսության համար գազի սակագինն ավելի էժան է լինում, քան խոշոր սպառողի համար: Տնտեսագետներից մեկն այս խնդիրը վեր հանելով՝ բերեց Ուկրաինայի օրինակը, որտեղ գազ ստանում են 400\$-ով, իսկ մեզ մոտ 180\$-ով, սակայն այնտեղ բնակիչներին վաճառում են մինչև 2500 խորանարդի դեպքում 100\$-ով, իսկ խոշոր սպառողներին կամ այսպես ասած օլիգարխներին՝ 700\$-ով, ստացվում է, որ խոշորսպառողին ավելի թանկ են վաճառում, քանի որնա արդյունահանող է և բացի իրիմնական աշխատավարձից եկամուտի այլ աղբյուրներ ունի:

- Իհարկե, իմ գործը չէ Ուկրաինայի շուկան վերլուծելը ու Ուկրաինայի տնտեսությամբ զբաղվելը, բայց ասեմ, որ այդ ինֆորմացիան ինչ-որ ամուսնով թերի է, այո՛, Ուկրաինան գնում է գազը Ռուսաստանից 400\$-ով, բայց Ուկրաինան ունի իր արդյունահանումը, իր սեփական գազն ունի, 400\$-անոց գազը համարվում է կոմերցիոն գազ, որը վաճառվում է կոմերցիոն կառույցներին, իսկ իր բնակչության համար սահմանել է ներքին գին, իր սեփական ռեսուրսը իր որոշած գնով տրամադրում է բնակչությանը, եթե մենք էլ ունենայինք սեփական ռեսուրս, համոզված եմ, որ մեր Կառավարությունն էլ նման կերպ կվարվեր:

Բացի այդ, Ուկրաինան ունի տրանզիտ, հիսուներեք միլիարդ խորանարդ մետրի սպառում ունի, մենք ունենք ընդամենը երկու միլիարդ խորանարդ մետրի սպառում: Անհամեմատելի թվեր են, այսօր համեմատության եզրեր փնտրելը Ուկրաինայի հետ սխալ է, համեմատում ենք լրիվ տարբեր մեծություններ:

- Կարծում եք, որ մեզ մոտ գնային քաղաքականությունը ճի՞շտ է, և սոցիալական տարբեր խմբերի միջև համարժե՞ք է բաժանումը:

- Սոցիալական տարբեր խմբեր մեզ մոտ ֆիքսված չեն, մեզ մոտ ֆիքսված է արդյունաբերությունն ու բնակչությունը, բնակչությունը բոլորը սպառում են հարյուր հիսունվեց դրամ սակագնով գազ՝ անկախ սոցիալական խմբից, իսկ սոցիալապես անապահով ընտանիքներին տրվում է կոմպենսացիա Կառավարության կողմից, նախկին սակագնի դեպքում դա կազմում էր երեսուներկու դրամ, որ փոխհատուցվում էր Կառավարության կողմից. մինչև երեք հարյուր խորանարդ մետր սպառման դեպքում անապահով բնակիչները վճարում են հարյուր դրամ, հիմա էլ նույն մեխանիզմն է գործում: Անապահով ընտանիքները վճարելու են հարյուր դրամ, իսկ տարբերությունը՝ հիսունվեց դրամը, փոխհատուցվելու է Կառավարության կողմից:

Սոցալ նախարարությունն է տրամադրում մեզ այդ ցուցակը, թե ովքեր են ընդգրկված այդ խմբում, և իրենք վճարում են հարյուր դրամ:

- Եթե Կառավարությունը գազի գնի 30%-ը չսուբսիդավորի, կստացվի, որ մեզ մոտ աշխարհիամենաթանկ գազերից է՝ հաշվի առնելով մեր գազի կալորիականությունը:

-270\$ գազը երևի մեր տարածաշրջանում ամենաէժան գազն է:

Նոր սակագնի հիմքում կալորիականությունն ընդհանրապես նախատեսված չէ, մեր բանակցությունների արդյունքում մենք ունենք պայմանագիր, որտեղ համենայն դեպս մոտակա երեք տարիների ընթացքում Ռուսաստանի կողմից կալորիականությունն չի հաշվարկվելու, բայց 7900 ստանդարտ կալորիականություն ունեցող գազի փոխարեն ներմուծում ենք 8200-8300 կալորիականության գազ:

-Պարոն Ջարութունյան, կասե՞ք Ռուսաստանից վաճառվող գազի սակագնի բաղադրիչները առանձին-առանձին:

-70\$ մարժան է, սահմանի վրա ֆիքսված է 270 \$, որից 30%-ը կտուբսիդավորվի, մեխանիզմները փնտրվում են, դեռ վերջնական լուծում չկա, չեմ ուզում այդ հարցին անդրադառնալ, որովհետև իմ խնդիրը չէ: 20% ԱԱՀ-ն «Յայռուսգազարդի» մարժան չի կարելի համարել. դա հարկ է, որը վճարվում է պետությանը և երևի տեղյակ եք երկու օր առաջվա հրապարակված տվյալները, որ «Յայռուսգազարդը» հարկատուների առաջին տեղում է, 70\$ մարժան էլ իրենից ներկայացնում է շահագործման ծախսեր և աշխատավարձ:

-Ի դեպ, աշխատավարձից խոսեցիք, ասում են Ձեր աշխատավարձերը բարձրացել են, եթե բարձրացել են, կարո՞ղ եք ասել միջին աշխատավարձը «Յայռուսգազարդ»-ում ինչքա՞ն է:

-«Յայռուսգազարդ»-ի միջին աշխատավարձը եղել է հարյուր տասներկու հազար դրամ, հիմա դարձել է երկու հարյուր հազար դրամ:

-Ինչի՞ հետ է կապվում այդ բարձրացումը, սակագնի փոփոխության հետ կա՞յ ունի:

-Իսկ ինչի՞ չպետք է բարձրանա, եթե գործատուն կարողանում է աշխատավարձը բարձրացնել, դա բացասակա՞ն եք ընդունում, ինչի՞ համար է հասարակությունը բացասական ընդունում «Յայռուսգազարդ»-ի աշխատակիցների աշխատավարձերի բարձրացումը, ինչի՞ չէ:

Եթե մեր աշխատակիցը այսօր ստանում է համեմատաբար բարձր աշխատավարձ, պետք է ասեմ, որ մեր աշխատակիցները միգրացիոն չեղանցող, բայց շատ ծանր աշխատանք են կատարում, եթե մարդուն ընդունում են աշխատանքի, պիտի վարձատրես. ես պատասխանատու եմ այս ոլորտի համար ու ամեն ինչ պետք է անեմ, որ իմ անձի ենթակայության տակ աշխատող մարդիկ իրենց բավարարված զգան, ցանկացած գործատու պետք է մտածի իր աշխատակցի բարեկեցության մասին:

Սակագնի բարձրացումը Եական բարձրացում չի բերել աշխատավարձերի, իր կառուցվածքով այն մեծ տեսակարար կշիռ չունի սակագնի մեջ, ուղղակի ինչ-որ շրջանակների շահարկման թեմա է, թող շահարկեն, ի՞նչ ասեմ, եթե հայ մարդուն տրվող աշխատավարձը պիտի շահարկվի, թող շահարկեն, այսօր ինչի՞ չենք մտածում, որ պիտի արդիականացնենք համակարգը, ինչի՞ չենք մտածում, որ մենք ունենք հիսուն-վաթսուն տարվա գազատարներ, որոնք պիտի փոխվեն, իհարկե դրանք պետք է անել, եթե այսօր չանենք, տաս տարի հետո անելու ենք, այլ տարբերակ չունենք, հինգ-տաս տարի հետո ավելի թանկ ենք վճարելու, սակագնի ավելի կտրուկ աճ ենք ունենալու, քան թե հիմա աստիճանաբար փորձենք բարձրացնել ու փորձել այդ խնդիրները լուծել:

-Իսկ տնօրենների խորհրդի աշխատավարձերը բարձրացե՞լ են:

- Տնօրենների խորհրդի աշխատավարձը սահմանվում է Գազպրոմի կողմից, ոչ թե այսօրվա դրությամբ բարձրացում չի եղել, որովհետև մեր պայմանագրերը կնքվում են տարին մեկ: Հունվարի մեկից միգուցե փոփոխություն չի, իսկ աշխատակիցների աշխատավարձերը սեպտեմբերի մեկից կբարձրանան, որովհետև մենք նոր սակագնով ստացված գումարները կստանանք օգոստոսին:

-Պարոն Հարությունյան, գազի սպառման ծավալները մեզ մոտ կրճատվե՞լ են: Կա մտավախություն, որ թանկացումներից հետո բաժանորդները կամ կհրաժարվեն գազ սպառել, կամ կսկսեն խնայել:

-Վերջին վեց ամիսների տվյալներով կարող եմ ասել, որ սպառման անկում չունենք, ներկրման և իրացման տեսանկյունից, ճիշտ է, բնակչության մասով անկում ունենք: Ես մի անգամ հնչեցրել եմ, որ բնակչությունը պակաս գազ է սպառում՝ ելնելով եղանակային պայմաններից, հիմա ուզում եմ ապացուցել, որ իրոք այդպես է:

Կտրամադրեմ ՀՀ առաջինից չորրորդ ամիսների եղանակային պայմանները, ու կհամոզվեք, որ այս տարվա երկրորդ-երրորդ ամիսներին մի դեպքում 6.5, մեկ այլ դեպքում 5.7 աստիճանով ջերմաստիճանն ավելի բարձր է եղել, քան 2012 թվականին, իսկ դա զգալի ջերմաստիճանային տարբերություն է, ու այսօր սպառողների գրեթե մեծամասնության մոտ տեղադրված են ավտոմատ կարգավորվող սարքեր, որոնք ջերմաստիճանի իջեցումից կամ բարձրացումից ավել կամ պակաս գազ են սպառում:

Հենց այսօրվա տվյալներով՝ երկու աստիճանի տարբերություն է եղել նախորդ տարվա նույն օրվա համեմատ. 24 աստիճան ունեցել ենք 2012 թվականի հուլիսի քսանյոթին և 22 աստիճան ջերմաստիճան՝ 2013 թվականի հուլիսի քսանյոթին:

Կարո՞ղ ենք, չէ՞, ասել, որ դա կախված է ոչ թե թանկացումից, այլ եղանակային պայմաններից:

Այս ամսվա սկզբից մինչև ամսի 25-ը բնակչությունը սպառել է 554.000 խորանարդ մետր ավելի գազ, քան նախորդ տարվա նույն ժամանակահատվածում, որովհետև եղանակը նախորդ տարվա համեմատ ցուրտ է եղել, կարող է մեկ-երկու աստիճան, բայց այդ սարքերը զգայուն են, և իրենց վրա նույնիսկ այդ մի քանի աստիճանը նկատելի է:

-Պարոն Հարությունյան, ՀՀ-ն գրեթե ամբողջությամբ գազաֆիկացված է՝ մոտ 95-96%, սակայն մոտ մեկ երրորդ մասը գազ չի սպառում, ավելորդ ծախս չէ՞ այդ գազաֆիկացումը, երբ գազ չեն սպառում:

-95% գազաֆիկացվել է, մենք ունենք 645.000 բաժանորդ, Հայաստանում 900.000 տնտեսություն կա, դա մեկ երրորդ չէ, վերջին վեց ամիսների ընթացքում ավելացել է 4358 բաժանորդ, վերջին երկու ամիսներին էլ, երբ թանկացման տենդենցը կար և բոլորը գիտեին, որ թանկանալու է, կրկին ավելացել են. 748 բաժանորդ ավելացել են հունիսին, և հուլիսը դեռ չենք ամփոփել, բայց արդեն 650 բաժանորդ ունենք ավելացած:

Ո՞նց բացատրենք էս, ո՞նց բացատրենք, որ մարդիկ ուզում են գազ ունենան, ինչի՞ մարդկանց գրկենք նման հնարավորությունից, գազատարը եթե չհասցնենք գյուղ, չհասցնենք շենք, մարդն ուզում է օգտվել գազից, ո՞նց օգտվի: Եթե հասցնում ենք գյուղ, այդ գյուղում գոնե տասը հոգի հնարավորություն ունի օգտվելու, եթե իրենց չտայինք այդ հնարավորությունը, ի՞նչ էինք շահելու:

Ներկայացնեմ նաև այլ վիճակագրություն. 2002 թվականին բնակչությունը սպառել է 101 միլիոն գազ, 2012 թվականին՝ 543 միլիոն խորանարդ մետր գազ, եթե չգազաֆիկացնեինք, երկրում հինգ անգամ չէր աճի գազի սպառման ծավալը:

Գազը հասցրել ենք գյուղ. մեկը հնարավորություն ունի օգտվելու, մյուսը չունի, հո մենք չենք պարտադրում, որ բոլորը օգտվեն գազից, մենք այլընտրանք առաջարկում ենք. ուզում եք օգտվեք՝ օգտվեք, չեք ուզում՝ մի օգտվեք, ոչ մեկը չի ստիպում, դա է այսօր գազի արժեքը, ամեն ապրանք ունի իր գինը:

Ով հնարավորություն ունի օգտվելու, օգտվում է, ով չունի՝ չի օգտվում, այսօր «Յայռուսգազարդ»-ը կոմերցիոն կառույց է, շահույթ հետապնդող, ինչպես ցանկացած կոմերցիոն կառույց:

-Պարոն Յարությունյան, բարձրաձայնեմ որոշ տնտեսագետների կողմից «Յայռուսգազարդ»-ի հասցեին հնչող լուրջ մեղադրանքը. ասում են, որ կա խոշոր բուրժուազիա, որը սնվում է գազից և գազի սակագնի՝ բնակչության համար նման բարձրացումը պայմանավորված է նրանով, որ խոշոր սպառողների, այսինքն՝ օլիգարխների մեծ մասը չեն վճարում կամ մասամբ են վճարում, և հաճախ այդ պարագան հանրությանը ներկայացվում է այնպես, որ մենք Ռուսաստանի հետ այնքան լավ ենք, որ Ռուսաստանը մեզ ավելի էժան գազ է տալիս, քան, օրինակ, Ուկրաինային, բայց արդյունքում մենք ավելի թանկ ենք վճարում գազի համար, ի՞նչ կասեք այս մեղադրանքի հետ կապված:

-Նախ այդ մեղադրանքը արտահայտողին խնդրում եմ, հորդորում, ինչպես նաև ձեր լրատվամիջոցի, հեռուստաընկերության հետ միասին հնչեցնի այն օլիգարխի, բուրժուայի տունը կամ ձեռնարկությունը, որին կասկածում է, կազմենք լրագրողական խումբ, գնանք այդ մարդկանց տներն ու ձեռնարկությունները, որպեսզի միանգամից փակվի այս խոսակցությունը, կամ ասեք մի անուն, և իր տան կամ ձեռնարկության գազի իրացման տվյալները տրամադրենք:

Իմ ինքնասիրությունը չի ների, որ իմ ղեկավարած կառույցից որևէ մեկը որևէ բան գողանա կամ իմ գիտությամբ հիմնարկը թալանի, ուղղակի չեմ թողնի:

Որ պահին ես զգամ, որ կարող է լինել արտոնյալ բաժանորդ, ես դիմում կտամ դուրս կգամ, ո՞նց թողնես, որ ինչ-որ մեկը քեզանից բան տանի:

-Ոչ որպես «Յայռուսգազարդ»-ի վարչության նախագահ և գլխավոր տնօրեն, այլ որպես տնտեսագիտության թեկնածու, ըստ Ձեզ՝ ինչո՞վ է պայմանավորված, որ մեր տնտեսության մեջ թանկացումը չի լինում փոքր տոկոսներով, այլ գոնե տասը տոկոս պետք է լինի:

-Ես կողմ կլինեմ, որ ամեն տարի գազի սակագին վերանայվի, Ռուսաստանի պես երկրում, որն ունի սեփական ռեսուրս, ամեն տարի փոփոխություն է լինում, իսկ մեզ մոտ երկու-երեք տարին մեկ վերանայելու դեպքում բերում է նրան, որ 10-13,

14% թանկացում է լինում, իսկ եթե ամեն տարի վերանայենք, թանկացումը կլինի 2, 3, 5%, ու սպառողի վրա այդքան էական ազդեցություն չի ունենա:

-Ի՞նչ եք կարծում՝ թանկացումը ինչքանո՞վ կանդրադառնա միջին աշխատավարձ ստացողների վրա ձմռան ամիսներին:

-Մեկ բաժանորդը տարեկան սպառում է միջինում 960 խորանարդ մետր գազ, յուրաքանչյուր բաժանորդի վրա տարեկան կտրվածքով 23000 դրամ թանկացում կլինի, եթե բաժանենք ամիսների, կլինի 1900 դրամ, իհարկե 1900 դրամը սոցիալապես անապահով ընտանիքի համար գումար է, ինչի հիսունվեց դրամը փոխհատուցվելու է պետության կողմից, իսկ ինչ վերաբերում է միջին և ավելի եկամուտ ունեցող բնակչին, ապա ինձ թվում է՝ դա այնքան էլ մեծ գումար չէ:

Իսկ ինչո՞ւ չեք ասում, որ «Չայռուզագարդ»-ը մեքենաներ ունի, որոնք 85-90 թվականների արտադրության են, դրանցով ենք այսօր շահագործումն անում, հինգ տարի էլ չփոխենք, հետո ինչո՞վ ենք շահագործելու, ձիո՞վ անենք սպասարկումը, պետք է, չէ՞, արդիականացնել, ինչ-որ մի բան փոխել: Այդ ամենն էլ արվում է եկամուտ ունենալու դեպքում: Ուժեղ, հարուստ «Չայռուզագարդ»-ն է լավ մեր պետության համար, թե՞ քյասիբ «Չայռուզագարդ»-ը, իհարկե ուժեղ «Չայռուզագարդ»-ը:

Ես հպարտ եմ, որ իմ ղեկավարած կառույցը երկրի առաջին հարկատուն է, ոչ մի երկրում դրանով չեն հպարտանում, ես իմ երկրում հպարտանում եմ:

Մենք ԱԳԼԾԿ-ների թվով աշխարհում առաջինն ենք, ինչի՞ հաշվին, որովհետև ամբողջ երկիրը գազաֆիկացված է, բենզին-գազ հարաբերակցության մասին գիտեք, համարյա հիսուն տոկոս տնտեսում կա, դա էլ է մեր տնտեսության մեջ դրական ազդեցություն ունեցել: